

**ՀԱՆՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՇՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔՐԵԱ-  
ԿԱՆ ՕՐԵՆՍԳՐքԻ 343 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-  
ԹՅԱՆ ՄԱՇՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

14 հունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ռ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի,  
Մ. Թոփուզյանի, Վ. Դովիաննիսյանի (գեկուցող), Ռ. Նազարյանի, Ռ. Պապյանի,  
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմով՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունք-ների պաշտպան Ա. Հարությունյանի, զործով որպես պարասիստնող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կերպի եւ 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կերպի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343 հոդվածի 1-ին մասի՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 08.06.2009թ. մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 10 նոյեմբերի 2009թ. թիվ ՍԴԱՆ-98 աշխարհականացած որոշմամբ գործի դատաքննությունը հետաձգվել էր մինչեւ 2009թ. դեկտեմբերի 1-ը՝ նախագրեսելով վերսկսված գործի դատաքննությունը շարունակել բանավոր ընթացակարգով:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի եւ պատասխանող կողմի ներկայացուցչի բացաբրությունները, հետազոտելով ՀՀ քրեական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ.**

**1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2003թ. ապրիլի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից սպորագրվել՝ 2003թ. ապրիլի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից:**

ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Դատարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսեւորվել է վկայի կամ գումարով կամ պաշտպանի դատարան ներկայանալուց չարամփորեն խուսափելով կամ դատավորի կարգադրությանը չենթարկվելով կամ դատական նիստի կարգը խախտելով կամ այլ գործողություն կատարելով եւ վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկարմամբ բացահայտ արհամարհանքի մասին՝

պարժագույն է գումարով՝ նվազագույն աշխարհավարձի առավելագույնը հարյուրապիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով»:

**2. Դիմող կողմը նշում է, որ վիճարկվող նորմը որպես դատարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորող սուբյեկտ է դիմումը միայն վկային, գումարով կամ պաշտպանին: Քրեական դատավարության մյուս մասնակիցները եւ մասնակցող անձինք նշված հանցակազմի սուբյեկտներ չեն: Նման մոդելը արդյունքում վիճարկվող նորմն անհավասար դրության մեջ է դնում, մասնավորապես, պաշտպանին՝ դատա-**

վարության մյուս մասնակիցների համեմաք, քանի որ նույնպիսի արարքի համար պաշտպանը կարող է ենթարկվել քրեական հեքապնդման, իսկ մեղադրողը եւ մյուսները՝ ոչ: Նեփեւաբար, «վիճարկվող նորմը, օբյեկտիվ եւ պարզառաբանված արդարացման բացակայության պայմաններում, անհավասար դրության մեջ է դնում դափավարության կողմերին՝ մեղադրանքի եւ պաշտպանության, խորականություն սահմանելով նրանց նկարմամբ իրավական վերաբերմունքի մեջ, եւ այդ հիմքով, ի թիվս այլոց, հակասում է ՀՀ Սահմանադրության 14.1, 18 (1-ին եւ 2-րդ մասեր), 19 (1-ին մաս), 20 (1-ին եւ 2-րդ մասեր) հոդվածներին»:

Դիմող կողմը փաստարկում է նաև, որ վիճարկվող նորմը չի բավարարում իրավական օրենքին ներկայացվող՝ որոշակիության, հսկակության եւ կանխագիտեալիության պահանջները: Վիճարկվող նորմի անորոշությունն ու անհսկակությունը, ըստ դիմողի, դրսեւորվում է նրանում, որ դրանում օգբագործված հասկացությունների անորոշությունը (շեշտվում են «դափավորի կարգադրությանը չենթարկվել», «այլ գործողություններ», «դափարանի կամ դափական նիստի կարգի նկարմամբ բացահայտ արհամարհանք» բառակապակցությունները) պայմաններ է սփեղծել վիճարկվող նորմի կամայական մեկնարանման եւ կիրառման համար, ինչպես նաև վիճարկվող նորմը հնարավորություն չի ընձեռում հսկակորեն սահմանազարդել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքները ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածով, «Փափարանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախագիտեաված եւ իրավական այլ հեփեւանքներ առաջացնող գործողություններից:

**3. Դափասիանող կողմը նշում է, որ վիճարկվող նորմում չմարդնանշված՝ դափավարության մասնակիցների նկարմամբ պափասիանափվության հեք կապված իրավահարաբերությունները կարգավորված են ՀՀ դափական օրենսգրքով եւ «Դափասիագության մասին» ՀՀ օրենքով: Ըստ պափասիանողի՝ ՀՀ դափական օրենսգրքի համապատասխան նորմերի և «Դափասիագության մասին» ՀՀ օրենքի 46 եւ 47-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից չի բխում, որ վիճարկվող հոդվածն անհավասար պայմաններ է սփեղծում դափավարության մասնակիցների համար: Դիմողի այն փափարկների առնչությամբ, որ վիճարկվող նորմի առանձին արդարականացնություններ առաջացնում են իրավական անորոշություն, պափասիանողը**

նշում է, որ իրավական որոշակիության սկզբունքը չի նշանակում, որ օրենքները պետք է լինեն բացարձակ կողմնորոշիչ այս կամ այն վարքագիծը դրսեւորելու համար: Եթե որևէ նորմ ձեւակերպված չէ բացարձակ որոշակիությամբ, դա չի կարող բավարար պայման հանդիսանալ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված իրավական պետության սկզբունքին հակասելու համար:

Պարասխանողը գրնում է, որ վիճարկվող նորմի «...իրավական անորոշությունը հնարավոր չէ օրենքով միանշանակ վերացնել, քանի որ չեն կարող նախագիծները բոլոր այն իրավիճակները՝ գործողությունները եւ անգործությունները, որոնք կդիմությունը որպես «դարպարանի նկարմամբ ակնհայփ անհարգալից վերաբերմունք»»:

Միաժամանակ, պարասխանողը գրնում է, որ վիճարկվող նորմը կարաբելագործման անհրաժեշտություն ունի:

**4. Վիճարկվող նորմով օրենսդիրը որպես հանցագործություն է որակել դադարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքը՝ դրանում նշված դրսեւորումներով, նկարի ունենալով արդարադապության անկախ, անկողմնակալ (անկաշկանդ) իրականացման սահմանադրափական պահանջն ու այն օրենքով (այդ թվում՝ քրեափական) երաշխավորելու կարեւորությունը: Օրենսդիրը նշված արարքը՝ դրա հանրորեն վգանգավորության ուժով, դիմումունքում որպես հակափական՝ քրեական օրենքով նախագիծները եւ քրեորեն պատճելի արարք, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում այդ հանցագործության սուբյեկտ է համարել միայն վկային, գումարողին եւ պաշտպանին, իսկ 2-րդ եւ 3-րդ մասերի շրջանակներում՝ ցանկացած անձի, որը դրսեւորվել է դարպաննության մասնակիցներին կամ դարպավորին վիրավորելով:**

Հաշվի առնելով, որ վիճարկվող նորմի (ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի) դիմումունքում նախագիծները կարող են կարարվել ոչ միայն դրանում նշված անձանց, այլ նաև քրեական դարպարության այլ մասնակիցների կողմից՝ սահմանադրական դարպարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր է դառնում մի իրավիճակ, երբ վերջիններս կարարելով քրեական օրենսգրքով նախագիծները չեն ենթարկվում քրեափական համարժեք ներգործության:

Սահմանադրական դափարանը գլուխ է, որ նման իրավակարգավորմամբ ըստ էռության ոչ համաչափ վերաբերմունք է դրսեւորվում դափավարության մասնակիցների նկարմամբ:

Սահմանադրական դափարանն ընդունում է, որ, ինչպես նշվեց, օրենսդրի հայեցաղության շրջանակներում է այս կամ այն արարքի քրեականացումը: Այդուամենայնիվ, եթե օրենսդիրն այս կամ այն արարքը՝ դրա հանրորեն վրանգավորության ուժով, նախադեսել է քրեական օրենսգրքում որպես քրեորեն դափապարտելի արարք, ապա այդ արարքը կափարելու արգելքը պեսքը է սահմանվի բոլոր այն հնարավոր սուբյեկտների համար, ովքեր գործնականում կարող են կափարել փվյալ հանցագործությունը: Հակառակ դեպքում, միևնույն օբյեկտի նկարմամբ ովնձգող, համեմագրելի վիճակում գլուխող անձանց հանդեպ պեսքության կողմից կդրսեւորվի ոչ հիմնավոր դարբերակված վերաբերմունք՝ ի խախումն օրենքի առջեւ բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի:

Սահմանադրական դափարանը գլուխ է նաև, որ հանցագործության սուբյեկտների կազմի չհիմնավորված սահմանափակումը թույլ չի տալիս նաև լուծել ՀՀ քրեական օրենսգրքի, մասնավորապես՝ վերջինիս 2-րդ հոդվածում ամրագրված, խնդիրները: Բացառելով վիճարկվող նորմում նշված արարքը թույլ փված առանձին անձանց քրեական պարախանագրվության ենթարկելու հնարավորությունը՝ չի ապահովվում այդ արարքով ովնձգվող արժեքները լիարժեք պաշտպանելու եւ այդ արարքը կանխելու՝ քրեական օրենսգրքով սահմանված խնդիրի լուծումը: Մյուս կողմից՝ խախումն են դափավարության մասնակիցների, մասնավորապես՝ կողմերի, իրավահավասարության, դափավարության մրցակցության, հետեւապես՝ նաև Սահմանադրության 19-րդ հոդվածով նախադեսված արդար դափաքննության սկզբունքները, քանի որ կողմերի համար դափավարական գործընթացին մասնակցելու հավասար պայմաններ ու հնարավորություններ չեն երաշխավորվում: Դրանից չի բխում, որ վիճարկվող դրույթում նշված սուբյեկտների առնչությամբ դափարանի կամ դափական նիստի կարգի նկարմամբ բացահայտ արհամարհանքի դրսեւորումը քրեորեն պարտելի արարք դիմելն ինքնին իրավաչափ ու սահմանադրական չէ: Խնդրահարույցը դափավարության այլ մասնակիցների համարժեք գործողություններն այդպիսին չդիմարկելն է:

**5. ՌԱ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՎԱՐԱՆԸ Ի ՀԱՅԱՐՈՒՄ ՎԵՃԻ ԱՌԱՐԿԱՆ ԴԻՎԱՐ-  
ԿԵԼ ՆԱԵՒ ՀԱՆԳԱԳՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՎՈՒԿ ՍՊԻՐԵԼԿՎԻ ՀԱՍԼԱԳՈՒԹՅԱՆ, ՀԱՎՈՒԿ ՍՊԻՐԵԼԿՎԻ  
ՈՐՈՉՄԱՆ ԻԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԶԱՓԱՆԻՉՆԵՐԻ ՎԵՍԱՆԼՅՈՒՆԻց: ՌԱ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՈՒՍՈՒՄ-  
ՆԱՀԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԿԱՅՈՒՄ Է, որ ՀԱՎՈՒԿ ՍՊԻՐԵԼԿՎԻ ՈՐՈՉՈՒՄՆ ԱՐՎԱՀԱՅՎՈՒՄ Է ԿՈՆԿՐԵՎ  
ՎԵՏԱԿԻ ՀԱՆԳԱԳՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՋՆԱՀԱՎԼԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԱՆՐՈՐԵՆ ՎՔԱՆ-  
ԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՍՎԻՃԱՆԸ: Այս կամ այն անձին որպես ԳՎԱԼ ՀԱՆԳԱԳՐԾՈՒԹՅԱՆ ՀԱ-  
ՎՈՒԿ ՍՊԻՐԵԼԿՎ ՃԱՆԱՀԵԼ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՒՄ Է ՆՐԱՆՈՎ, որ իրենց պաշտոնական կամ այլ  
դրության իիմքով նրանք կարող են կարարել ՀԱՆԳԱԳՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որոնք այլ անձինք  
կարարել չեն կարող: Այսինքն՝ ԳՎԱԼ ՀԱՆԳԱԳՐԾՈՒԹՅԱՆ ԲՆՈՒյթը եւ այն կարարելու  
հնարավորությունն են այն ԶԱՓԱՆԻՉՆԵՐԸ, որոնք օբյեկտիվորեն, անկախ օրենսդրի  
կամքից, կանխորոշում են ՀԱՎՈՒԿ ՍՊԻՐԵԼԿՎԻ ՇՐՋԱՆԱԿԸ: Այս ԶԱՓԱՆԻՉՆԵՐԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ  
են, որ ԳՎԱԼ ՀԱՆԳԱԿԱԳՄԻ ՀԱՎՈՒԿ ՍՊԻՐԵԼԿՎԻ ՇՐՋԱՆԱԿՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼՀՈՐԵՆ ՊԵՎՔ Է  
ՀԱՄԲՆԿԻ ԲՈԼՈՐ ԱՅՆ ԱՆՁԱՆԳ ՇՐՋԱՆԱԿԻ հետք, ովքեր իրենց պաշտոնական կամ այլ  
դրության ուժով ունակ են կարարել ԳՎԱԼ ԱՐԱՐՔԸ: Մասնավորապես, առանձնացվում  
են ՀԱՎՈՒԿ ՍՊԻՐԵԼԿՎԻ ՈՐՈՉՄԱՆ ԻԵՎԻՆՅԱԼ ՀԱՎԼԿԱՆԻՉՆԵՐԸ. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ,  
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԼԿԱՆԻՉԸ, ՄԱՍՆԱԳԻՒՐԱԿԱՆ ԱՎԱՐՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՎԱՐԱԾ  
ԱՇԽԱՎԱՆՔԻ ԲՆՈՒյթը, ԱՐԴԱՐԱԴԱՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՎՈՒԹՅԱՆ եւ ՔԱՂԱ-  
ՔԱԳԻՆԵՐԻ ՄԻջեւ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ եւ այլն: ՌԱ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ՝ ՎԻՃԱՐԿՎՈՂ  
ՆՈՐՄԸ ՆԵՐԱՌՈՂ՝ «ԱՐԴԱՐԱԴԱՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՎԱԾ ՀԱՆԳԱԳՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ՎԵՐԱ-  
ՌՈՒԹՅԱՄԲ 31-ՐԴ գլխում ներառված մյուս բոլոր ՀԱՆԳԱԿԱԳՄԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՀԻՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԿԱՅՈՒՄ Է, որ օրենսդիրն առաջնորդվել է ՀԱՆԳԱԳՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՎՈՒԿ ՍՊԻՐԵԼԿՎԻ  
ՈՐՈՉՄԱՆ ՎԵՐՈՒՀԻՉՅԱԼ ՕԲՅԵԿՎԻՎ ԶԱՓԱՆԻՉՆԵՐՈՎ՝ յուրաքանչյուր ՀԱՆԳԱԿԱԳՄԻ ԴԵՎՐՈՒՄ  
ՀԱՎՈՒԿ ՍՊԻՐԵԼԿՎԻ ԿԱԳՄՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՎ ԲՈԼՈՐ ԱՅՆ ԱՆՁԱՆԳ, ՈՎՔԵՐ ՀԱՎՈՒԿ ՍՊԻՐԵԼԿՎԻՆ  
ԲՆՈՐՈՉ ԼՐԱԳՈՒԳԻ ՀԱՎԼԿԱՆԻՉՆԵՐԻ ՈՒԺՈՎ ԿԱՐՈՂ են կարարել ԳՎԱԼ ՀԱՆԳԱԿԱԳՄԻ  
ՕԲՅԵԿՎԻՎ ԿՈՂՄԸ ԿԱԳՄՈՂ ԱՐԱՐՔԸ: ՄԻՆՉՔԵՆ ՎԻՃԱՐԿՎՈՂ ՆՈՐՄՈՒՄ ՕՐԵՆՍԴԻՐԸ, Ի  
ՎԱՐՔԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՎԱԾ ՄՅՈՒՍ ՀԱՆԳԱԳՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,  
ՇԵՂՎԵԼ է նշված ՎՐԱՄԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԻց՝ ՍԱՀՄԱՆԱՎԻԱԿԵԼՈՎ ՀԱՎՈՒԿ ՍՊԻՐԵԼԿՎԻ  
ՇՐՋԱՆԱԿԸ, եւ այդ ՇՐՋԱՆԱԿԻց բացառելով նոյն ԱՐԱՐՔԸ ԿԱՎԱՐԱԼՈՒ ՈՒՆԱԿ Ու ՄԻԵՒՆՈՒՅՆ  
ԳՈՐԾՆԲԹԱԳԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ (ԴԱՎԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՉԱԿԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵցող) ԱՅԼ  
ԱՆՁԱՆԳ:**

**6.** Սահմանադրական դադարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականության հարցը քննարկել նաեւ **«» քրեական օրենսգրքում եւ Վարչական իրավախախորումների վերաբերյալ **«» օրենսգրքում կադրված փոփոխությունների համապեքսպում:****

Սահմանադրական դադարանը հարկ է համարում նախ ընդգծել, որ մինչեւ վիճարկվող նորմի գործող խմբագրությամբ դեքսպում «**«» քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կադրելու մասին» 16.12.2005թ. ՇՕ-33-Ն **«» օրենքով կադրված փոփոխությունը, **«» քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի՝ 2003թ. ապրիլի 18-ի խմբագրությամբ դեքսպը սահմանում էր. «Նոդված 343. Դադարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքը.******

**1.** Դադարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսեւորվել է դադարքնության մասնակիցներին վիրավորելով՝

պարմվում է դրուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապափիկից երեքհարյուրապափիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

**2.** Նույն արարքը, որը դրսեւորվել է պաշտոնեական լիազորությունների իրականացման առնչությամբ դադարակի վիրավորելով՝

պարմվում է դրուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապափիկից հինգհարյուրապափիկի չափով, կամ ուղղից աշխատանքներով՝ մեկից երկու դրարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով»:

**«» քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կադրելու մասին» 16.12.2005թ. ՇՕ-33-Ն **«» օրենքի 5-րդ հոդվածով օրենսգրքի 343-րդ հոդվածը շարադրվեց գործող խմբագրությամբ: Նոդվածի նախորդ խմբագրությամբ դեքսպի առաջին եւ երկրորդ մասերը վերաշարադրվեցին որպես 2-րդ եւ 3-րդ մասեր, իսկ վիճարկվող նորմն ամրագրվեց որպես հոդվածի 1-ին մաս: Օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ վիճարկվող նորմի եւ հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերի ուսումնասիրությունը վկայում է, որ, ի դարբերություն վիճարկվող նորմի, այդ մասերում ամրագրված հանցակազմերում որևէ հագուկ սուրբեկալ չի շեշտադրվում՝ ապահովելով բոլոր այն անձանց քրեական պարագանականագործությունը, որոնց կողմից՝ դադարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքը դրսեւորվում է դադարական մասնակիցներին կամ դադարակի վիրավորելու ձեւով: Փաստորեն դարբերակած մոդելում է ցուցաբերվել դադարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքի****

դարբեր դրսեւորումների առնչությամբ՝ մի դրսեւորման դեպքում սահմանափակելով հագուկ սուբյեկտի շրջանակը, մյուսների դեպքում որեւէ կերպ չսահմանափակելով այն:

Սահմանադրական դադարանն այս առնչությամբ հարկ է համարում նաև արձանագրել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ, որպես կանոն, այն երկրներում, որպես դադարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքն առաջացնում է քրեափակական ներգործություն, քրեորեն դադարապրելի են համարվում դադարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքի միայն այն դրսեւորումները, որոնք համադրելի են ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նախադեսված արարքների հավելանիշների հետ: Ինչ վերաբերում է դադարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքի այն դրսեւորմանը, որը սահմանված է վիճարկվող նորմի դիսպոզիցիայում, ապա այն, որպես կանոն, միջազգային պրակտիկայում քրեականացված չէ:

Մինչեւ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կապարելու մասին» 16.12.2005թ. ՇՕ-33-Ն ՀՀ օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված արարքի քրեականացումը, այդ արարքը, որպես վարչական իրավախախորում, նախադեսված էր Վարչական իրավախախորումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.1-րդ հոդվածում: Վերջինիս (02.09.93թ. խմբագրությամբ) դիսպոզիցիան նախադեսում էր. «Դադարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքը, որն արդահայրվել է վկայի, գումժողի, հայցվորի, պարախանողի դադարան ներկայանալուց չարամբորեն խուսափելու մեջ կամ էլ նախագահողի կարգադրությանը նշված անձանց եւ այլ քաղաքացիների չենթարկվելու կամ դադարական նիստի կարգը խախորելու մեջ, հավասարապես նաև որեւէ մեկի կողմից այնպիսի գործողություններ ձեռնարկելը, որոնք վկայում են քացահայտ արհամարհանքը դադարանի կամ էլ դադարանում սահմանված կանոնների նկարմամբ՝ առաջացնում են...»: ՀՀ վարչական իրավախախորումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.1-րդ հոդվածն ուժը կորցրել է «Վարչական իրավախախորումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կադարելու մասին» 16.12.2005թ. ՇՕ-32-Ն ՀՀ օրենքով, ինչը պայմանավորված է եղել այն փաստով, որ նույն օրն ընդունված՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կադարելու մասին» 16.12.2005թ. վերոհիշյալ ՇՕ-33-Ն ՀՀ օրենքով նշված արարքը քրեականացվել է: Վարչական իրավախախորումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.1-րդ հոդվածի եւ ՀՀ քրեական օրենս-

գրքի վիճարկվող դրույթի համեմատական վերլուծությունը վկայում է, որ, ի տարբերություն վիճարկվող նորմի, նույն արարքի համար նախկինում վարչական պարասիանագրվություն սահմանած նորմը դադարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքի այնպիսի դրսեւորումների դեպքում, ինչպիսիք են դադարակորի կարգադրությանը չենթարկվելը, դադարական նիստի կարգը խախտելը կամ դադարանի կամ դադարական նիստի կարգի նկարմամբ բացահայտ արհամարհանքի մասին վկայող այլ գործողություն կադարելը, սուբյեկտիվ կազմի որեւէ սահմանագրակում չեր նախադրեսում։ Ինչ վերաբերում է դադարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքի դրսեւորմանը՝ դադարան ներկայանալուց չարամփորեն խուսափելու ձեւով, ապա այդ արարքի համար վարչական պարասիանագրվություն սահմանվում էր **վկայի, գումարի, հայցվորի, պարասիանողի** համար։ Իսկ վիճարկվող նորմով եապես փոխվել է այդ կազմը եւ դադարան ներկայանալուց չարամփորեն խուսափելու համար պարասիանագրվություն սահմանված է **վկայի, գումարի, պաշտպանի** նկարմամբ։

Վերոհիշյալ համեմատական վերլուծությունը վկայում է, որ խնդրո առարկա վարչական իրավախախումը քրեականացնելու գործընթացում չի ապահովվել համարժեք վերաբերմունք իրավախախուման բոլոր իրավահավասար սուբյեկտների նկարմամբ։ Վարչական իրավախախումը քրեականացվել է միայն այդ իրավախախուման սահմանագրակ թվով սուբյեկտների նկարմամբ՝ փոփոխելով նրանց կազմը։ Ավելին, հաշվի չի առնվել վարչական այդպիսի իրավախախուման կրկնակի (կամ բազմակի, առավել հանրավանգ եղանակով) կադարումը՝ որպես արարքը քրեորեն պարմելի համարելու օբյեկտիվ անհրաժեշտություն։

Սահմանադրական դադարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ դադարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքի համար պարասիանագրվություն սահմանող նախկին եւ գործող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է նաեւ, որ Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.1-րդ հոդվածի ուժը կորցնելու եւ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասում վիճարկվող դրույթի ամրագրման արդյունքում վերջինում նշված սահմանագրակ թվով սուբյեկտների շրջանակից դուրս գտնվող սուբյեկտների նկարմամբ դեւական ժամանակ պարասիանագրվության որեւէ միջոց ընդհանրապես նախադրեսաված չի եղել։ Այսպես, Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.1-րդ հոդվածն ուժը կորցրել է 2006թ. փետրվարի 4-ին, նույն օրն ընդունված քրեական օրենսգրքի հոդվածով՝

նախադեսված արարքի դեպքում կիրառելի է համարվել քրեական պարասխանագություն միայն վկայի, գումողի եւ պաշտպանի նկարմամբ: Սկսած 2007թ. մարտի 7-ից, ՀՀ քրեական դարավարության եւ ՀՀ քաղաքացիական դարավարության օրենսգրքերում (համապարասխանաբար՝ 314.1 եւ 115-րդ հոդվածներ) կարգաված փոփոխությունների արդյունքում ամրագրվել է դարարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորող անձանց պարասխանագության ենթարկելու դարարանի լիազորությունը: Իսկ ՀՀ դարական օրենսգիրքը, որի 63-րդ հոդվածով սահմանվեցին դարարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքի համար դարական սանկցիաները՝ գրեթե բառացիորեն կրկնելով քրեական դարավարության օրենսգրքի դրույթները, ուժի մեջ է մտել 2007թ. մայիսի 18-ին: Բացի դրանից, եթե ՀՀ քրեական դարավարության եւ ՀՀ քաղաքացիական դարավարության օրենսգրքերում կարգաված փոփոխությունների արդյունքում հետագայում նախադեսվեց պարասխանագություն քաղաքացիական եւ քրեական դարավարության շրջանակներում դարարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքի համար, ապա նույն արարքը, որը դրսեւորվում է սահմանադրական դարավարության շրջանակներում, օրենքով պարասխանագության որեւէ միջոց նախադեսված չէ: «Սահմանադրական դարարանի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ դարական նիստում կարգը խախտելու դեպքում սահմանադրական դարարանն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում նշանակելու գործանք՝ օրենքով սահմանված կարգով եւ չափով, ինչը, սակայն, որեւէ օրենքով նախադեսված չէ:

Սահմանադրական դարարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կարգելու մասին» 16.12.2005թ. ՇՕ-33-Ն ՀՀ օրենքի եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կարգելու մասին» 16.12.2005թ. ՇՕ-32-Ն ՀՀ օրենքի ընդունման գործընթացին: «Սահմանադրական դարարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներից ելնելով օրենսդրական փոփոխության ընթացակարգի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ Ազգային ժողովում նման փոփոխության հիմնավորումն ու փասբացի փոփոխությունը համաշափելի չեն, չկա սուբյեկտների կազմի փոփոխության որեւէ հիմնավորում, չի ապահովվել միեւնույն հոդվածի (343-րդ հոդված) բարբեր մասերի համակարգային առումով փոխկապակցվածությունը: Այդ օրենքների նախագծերի քննար-

կումների եւ ընդունման անհրաժեշտության հիմնավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ օրենքներով կափարված փոփոխությունները հիմնավորվել են բացառապես վարչական կալանքի ինստիտուտի վերացման անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 16, 32-րդ հոդվածների պահանջները: Սակայն այդ եւ հետագայում կափարված փոփոխությունների համադրումից հետեւում է, որ վերոհիշյալ օրենսդրական լուծումները պարունակում են ներքին հակասություններ, քանի որ դրանց ընդունման արդյունքում՝ մի կողմից արարքը քրեականացվել է որոշակի սուբյեկտների նկարմամբ, մյուս կողմից՝ դադարել է, թեկուզ որոշ ժամանակափառում, հանրուեն վրանգավոր համարվել այլ սուբյեկտների առնչությամբ: Չի դրսեւորվել նաև համակարգված մոդելում, մասնավորապես՝ հաշվի առնելու, օրինակ, դափարան ներկայանալուց չարամբորեն խուսափելու դեպքում հարկադրանքի կիրառման հնարավորությունը, միեւնույն արարքը կրկնվելու դեպքում այլ սանկցիա կիրառելու անհրաժեշտությունը եւ այլն:

**7. Ինչպես նշվեց, դափարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունքի համար պարասիանափության միջոցներ են սահմանված նաև ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածում, ՀՀ քաղաքացիական դափավարության օրենսգրքի 115-րդ հոդվածում, ՀՀ դափական օրենսգրքի 63-րդ հոդվածում: Վերջիններիս համաձայն՝ դափարանն իրավասու է պարասիանափության ենթարկելու դափավարության մասնակիցներին, գործին մասնակցող անձանց եւ դափական նիստին ներկա գրնվող այլ անձանց՝ դափարանի նկարմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորելու, նիստի բնականոն ընթացքին խոչընդունելու, իրենց դափավարական իրավունքներից անբարեխողնորեն օգնվելու կամ դափավարական պարփականություններն անհարգելի չկափարելու կամ ոչ պարշաճ կափարելու դեպքերում: Այդպիսիք են՝ նախագուշացումը, նիստերի դահլիճից հեռացնելը, դափական վուգանքը, դափախազին կամ փասփարանին պարասիանափության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապարասիանաբար՝ գլխավոր դափախազին կամ Փասփարանական պալատ դիմելը: «Փասփարանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը, իր հերթին, որպես փասփարանին կարգապահական պարասիանափության ենթարկելու հիմքեր են ախտաբեռում այդ օրենքի, Փասփարանի վարքագծի կանոնագրքի եւ Փասփարանների պալատի կանոնադրության պահանջների խախումը, մասնագիտական պարփակա-**

նությունները չկարարելը կամ ոչ պարշաճ կարարելը: «Դարախագության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը որպես դարախագին կարգապահական պարտասիանարվության ենթարկելու հիմք է սահմանում ծառայողական պարբականությունները ոչ պարշաճ կարարելը, իր լիազորություններն իրականացնելիս օրենքը կոպիր կամ պարբերաբար խախտելը, «Դարախագի վարքագծի կանոնագրքի» պահանջների էական խախտումները:

Սահմանադրական դարարանը գրնում է, որ ինչպես ՀՀ դարական օրենսգրքի 63-րդ եւ ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված վերոհիշյալ գործողությունները, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող նորմում նշված գործողություններն ըստ էության համարժեք գործողություններ են, դրանք կարող են կարարվել ուղղակի դիրավորությամբ, եւ վիճարկվող նորմում բացակայում է հանցակազմի որևէ հավկանիշ, որը հնարավորություն կփա դրանով նախարեսված հակահրավական արարքը բարանչաբել ՀՀ դարական օրենսգրքի 63-րդ եւ ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված համարժեք իրավախախտումներից:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դարարանը գրնում է, որ ՀՀ դարական օրենսգրքի 63-րդ եւ ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված իրավախախտումների եւ վիճարկվող նորմում նշված հանցակազմի միջեւ էական գործերությունների բացակայության պայմաններում անձը գրկվում է իր վարքագծի իրավական հեգեւանքները կանխարեսելու հնարավորությունից, ինը չի բխում օրենքի կանխարեսելիության եւ որոշակիության սկզբունքներից:

Ավելին, նման պայմաններում իրավակիրառողի կողմից դարական սանկցիաների եւ քրեաիրավական ներգործության միջոցի միջեւ ընդունության հարցում կամայական մովեցման նախադրյալներ են սրեղծվում: Վերլուծությունը վկայում է, որ, մի կողմից, ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 314.1 եւ 153-րդ (քերման ենթարկելը), ՀՀ քաղաքացիական դարավարության օրենսգրքի 115-րդ (ինչպես նաև, օրինակ, 44-րդ հոդվածի 5-րդ մաս), ՀՀ դարական օրենսգրքի 63-րդ հոդվածների, մյուս կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի առկայությունն իրավական առումով առնվազն խնդրահարույց են դարձնում ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի ներկայիս ձեւակերպման գոյությունն ընդհանրապես:

Ընդհանրապես փվյալ հիմնախնդրի իրավակարգավորման հարցում չկա հսկակ համակարգային մոդեցում ՌՌ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի, ՌՌ քրեական դադավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի, ՌՌ քաղաքացիական դադավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի, ՌՌ դադական օրենսգրքի 63-րդ հոդվածի, ինչպես նաև փվյալ հարցով վարչական ու սահմանադրական դադավարության իրավակարգավորումների միջև:

Անդրադառնալով դիմողի կողմից մաքնանշված՝ վիճարկվող նորմում «դադավարությանը չենթարկվելով» ձեւակերպման անորոշության վերաբերյալ փաստարկին՝ սահմանադրական դադարանը գրնում է, որ, նախ՝ անհրաժեշտ է պարզաբանել վիճարկվող նորմում նշված կարգադրության բնույթը՝ քրեադադավարական մյուս նորմերի համադրությամբ:

ՌՌ քրեական դադավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը որպես պաշտպանի դադավարական պարփականություն է նախադեսում ոչ թե պարզապես դադախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դադական նիստը նախագահողի կարգադրություններին, այլ օրինական կարգադրություններին ենթարկվելը:

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը որպես անձին ազատությունից զրկելու հիմք է դիմումը ոչ թե պարզապես դադարանի կարգադրությանը, այլ դադարանի օրինական կարգադրությանը չենթարկվելը կամ օրենքով նախադեսված ցանկացած պարփակության կադարտումն ապահովելու նպարակը:

Ներպերական եւ միջազգային իրավական վերոհիշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ վիճարկվող նորմում «դադավարությանը չենթարկվելով» ձեւակերպման մեջ «կարգադրություն» եզրույթի ներքո ընկալվում է դադավարության կարգադրությունը, այսինքն՝ դադավարության այնպիսի կարգադրություն, որն ուղղված է դադավարության մասնակցի կողմից՝ վերջինիս համար օրենքով սահմանված իր պարփականության կադարման ապահովմանը: Սահմանադրական դադարանը գրնում է, որ իրավակիրառողը պետք է ենի վիճարկվող նորմում «դադավարությանը չենթարկվելով» ձեւակերպման նշված ընկալումից: Այսինքն՝ դադավարությանը չենթարկվելու հիմքով վիճարկվող նորմում նշված սուբյեկտները կարող են պարփականապվության ենթարկվել, եթե չեն կադարում դադավարության այն կարգադրությունը, որն օրինական է եւ ուղղված այդ սուբյեկտների կողմից՝ օրենքով սահմանված

իրենց դարպավարական պարփականությունները կափարելու ապահովմանը: Այսուհանդեռձ, «օրինական կարգադրություն» եզրույթն առավել հսկակ է եւ խնդիր չի առաջացնում նաեւ կարգադրության օրինականությունը սահմանված կարգով վիճարկելու հնարավորության առումով:

Անդրադառնալով դիմողի կողմից մաքնանշված՝ վիճարկվող նորմում «այլ գործողություն կափարելով» ձեւակերպման անորոշությանը՝ սահմանադրական դարպարանը կարեւորում է այդ գործողությունների բնույթի պարզաբանման հարցը: Այդ նպարակով սահմանադրական դարպարանը հարկ է համարում խնդրությունը առարկա ձեւակերպումը դիմումի վիճարկվող նորմում «վկայում է դարպարանի կամ դարպական նիստի կարգի նկարմամբ բացահայտ արհամարհանքի մասին» ձեւակերպման համապեքսպում: Նման մոդելում պարագայում սահմանադրական դարպարանն արձանագրում է, որ.

1) **«** քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի խնդիրը չէ «այլ գործողություն» հասկացության բովանդակության մեջ ներառվող բոլոր հնարավոր դեպքերի թվարկումը: Այդ հոդվածի առարկան է քրեական պարապահանափություն սահմանելը բացառապես այնպիսի գործողությունների համար, որոնք վկայում են դարպարանի կամ դարպական նիստի կարգի նկարմամբ բացահայտ արհամարհանքի մասին,

2) որպես իրավակիրառողի կամայական մոդելումը բացառող երաշխիք է հանդիսանում այն, որ **«** քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի ուժով սահմանագարված են փարբեր բնույթի գործողություններն այն գործողություններից, որոնք պարունակում են բացահայտ արհամարհանք դարպարանի կամ դարպական նիստի կարգի նկարմամբ,

3) «դարպական նիստի կարգ» հասկացության բովանդակությունը բացահայտված է **«** քրեական դարպավարության օրենսգրքի 314-րդ հոդվածում: Վիճարկվող նորմի կիրառման գործընթացում «դարպական նիստի կարգ» հասկացության ներքո պետք է ընկալել բացառապես այն կարգը, որը սահմանված է **«** քրեական դարպավարության օրենսգրքի 314-րդ հոդվածում: Ինչ վերաբերում է «արհամարհանք» հասկացության բովանդակությանը, ապա ինչպես քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում օգտագործված «վիրավորանք» հասկացությունը, այս հասկացությունը եւս յուրաքանչյուր դեպքում իրավակիրառողի կողմից գնահապման ենթակա հասկացություն է:

**8. Գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ դադավարության կողմը փորձել է իր նկարմամբ կիրառման ենթակա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարց բարձրացնել իր քրեական գործի դադավական քննության ընթացքում՝ միջնորդելով դադարանին նշված նորմի սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ խնդրանքով դիմել սահմանադրական դադարան։ Երեւանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դադարանն իր՝ 09.12.2008թ. որոշմամբ մերժել է դիմողի՝ սահմանադրական դադարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին միջնորդությունը՝ պարզապես որ «**Նշված օրենքը չի հակասում ՀՀ Սահմանադրության դրույթներին**, քանի որ ինչպես դադարվորի, այնպես էլ դադարախազի կողմից կադրարվող ոչ օրինաչափ գործողությունները և դրանց խախտման հետեւանքով առաջացող պարախանագույթյան հիմքերը կարգավորվում են ՀՀ «Դադարական օրենսգրքով» և «Դադարախազության մասին» ՀՀ օրենքով»։ Միջնորդության մերժումը կամ ընդունումն ընդհանուր իրավասության դադարանի խնդիրն է։ Սակայն ըստ Էության օրենքի նորմի սահմանադրականության հարց լուծելը, որոշման մեջ նման եզրահանգում ներկայացնելն անհամապեղելի են ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի պահանջների հետ։**

Ենելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով կիրառելի չէ նաև դադարավարության այլ մասնակիցների նկարմամբ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՎՈՐ**

**Գ. ՇԱՄՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

14 հունվարի 2010 թվականի  
ՍԴՈ-851